ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՎԱՆՈՒՄ ԵՎ 1908 Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երիտթուրքական շարժման սպառնալիքների ներքո սուլթան Աբդուլ Համիդը 1908 թ. հուլիսի 10-ի հրովարտակով նորից գործողության մեջ է դնում 1876 թ. Միթհատյան սահմանադրությունը և հրամայում անցկացնել մեպուսանի կամ երեսփոխանական ժողովի ընտրություններ, որին հավասարապես մասնակցելու իրավունք էր վերապահվում ինչպես մահմեդական, այնպես էլ ոչ մահմեդական հպատակներին: «Սահմանադրականներուն պայքարը,– ինչպես Ե. Օտյանն է բնորոշում,– տևեց մինչև Օսմանյան սահմանադրության հռչակումը… Սահմանադրականները վերջապես հաղթանակեցին»[1]:

Եվրոպական պետություններին ուղղված 1908 թ. հուլիսի 31-ի հայտարարության մեջ, երիտթուրքերը, երեք առանցքային խնդիրների իրականացման գործում, կարևոր էին համարում նաև 1876 թ. սահմանադրության վերահաստատումը. « ա) Պիտի խուսափինք ավելորդ արյունահեղութենե, բ) մեր պահանջն է 1876-ի Սահմանադրության վերահաստատումը, գ) Օսմանյան բոլոր կրոնները և ցեղերը հավասար կը նկատենք ու բանակը պիտի պաշտպանե երկրին անձեռնմխելիությունը»[2]: Ինչպես Նիազի բեյն էր նշում 1908 թ. հուլիսին, «Կ'երդնում խտրություն չդնել ո՛չ ցեղի և ո՛չ կրոններու դեմ: Իմ դրոշակիս վրա գրված է «Ազատություն և ճշմարտություն»: Կը հուսամ որ բոլոր Օսմանցիները արժանի մեծ համակրությամբ պիտի ողջունեն այս շարժումը և պիտի պաշտպանեն այս իտեալը, որուն համար ուխտած ենք կռվիլ»[3]:

Երկրում երեսփոխանական ընտրություններ անցկացնելու մասին սուլթանի հրամանը հրապարակվեց 1908 թ. օգոստոսի 2-ին, որին հետևեց մեծ վեզիր Սայիդ փաշայի շրջաբերական նամակը, որում, երիտթուրքերի ճնշման տակ, ներկայացված էին օրինագծի որոշ հոդվածների փոփոխման բացատրությունները:

1908 թ. սեպտեմբերին Իթթիհատի կենտրոնական կոմիտեն Սալոնիկում հրապարակած նախընտրական քարոզարշավի իր քաղաքական ծրագրում առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում համընդհանուր՝ նոր նախընտրական իրավունքի իրականացման, բնակչության կողմից Սենատի 2/3-ի ընտրության, երեսփոխաններին օրենսդրական նախաձեռնության տրամադրման և ազգային փոքրամասնություններին ընտրական տեղերի հատկացման վրա:

---

[1] Ե. Օ տ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր չորրորդ, Երևան, 1962, էջ 427:

[2] Հ. Գ ա ն գ ր ո ւ ն ի. Հայ Հեղափոխությունը Օսմանյան բռնատիրության դեմ (1890-1910), Պեյրութ, 1973, էջ 229:

[3] Նույն տեղում:

Վ. Թունյանի իրավացի դիտարկմամբ, երիտթուրքերի նախընտրական գործունեության ծրագիրն իր ուղղվածությամբ ուներ դրական բնույթ, քանի որ թույլ էր տալիս առաջընթացի օգտին կատարվող ցանկացած փոփոխության մեկնաբանություն, սահմանափակում էր սուլթանի իշխանությունը և քաղաքական կենտրոնացման հունի մեջ էր դնում Իթթիհատի իշխանությունը: Երիտթուրքական սահմանադրությունը ստանում էր «օրինականացում»[4]:

Նախընտրական օրենքի հիմքում ընկած էր երեսփոխանական պալատի կողմից 1877 թ. մշակված օրինագիծը, որը, սակայն, ժամանակին չէր հաստատվել սուլթանի կողմից և չուներ օրենքի ուժ:

Երեսփոխանական ժողովի ընտրություններին իրավունք ունեին մասնակցելու Օսմանյան կայսրության բոլոր քաղաքացիները՝ առանց ազգային, լեզվական և կրոնական խտրության[5]: Ըստ օսմանյան սահմանադրության, օսմանյան հպատակություն ունեցող 50 000 արական շնչին բաժին էր հասնում 1 պատգամավոր[6]: Ընտրությունը կատարվելու էր գաղտնի քվեարկությամբ և երկաստիճան ընտրակարգով: Բացի նախարարներից, պետական պաշտոնյաները չէին կարող զբաղեցնել պատգամավորական աթոռները: Պաշտոնատար անձը, պատգամավոր ընտրվելուց հետո, պետք է հրաժարվեր իր պաշտոնից:

Ընտրական օրինագծի հիմքում ընկած էին ունեցվածքի, բնակության, տարիքային և կրթական արտոնակարգերը (ցենզը): Համաձայն 1877 թ. օրենսդրության, ընտրական իրավունք տրվում էր միայն այն անձանց, ովքեր պետությանը վճարում էին հողային և եկամտային հարկ, այսինքն՝ ճանաչում էին գույքի արտոնակարգը: Այս ձևը պահպանվում էր միայն առաջին կարգի ընտրողների համար: Իսկ երկրորդ կարգի համար երիտթուրքերը հասան ընտրական շրջանակի մեծացման՝ ընդգրկելով նրանց, ովքեր վճարում էին անասունների և տասանորդի հարկ:

Եթե 1877 թ. օրինագծի համաձայն չէր կարելի պատգամավորության թեկնածությունը դնել այն վայրում, որտեղ թեկնածուն չէր ապրել որոշակի ժամանակ, ապա 1908 թ. բնակության արտոնակարգը վերանում էր: Երիտթուրքերը հնարավորություն էին ստանում իրենց թեկնածուներին ուղարկել երկրի ցանկացած շրջան[7]:

Պատգամավորներ չէին կարող ընտրվել՝ օտարահպատակները, այն քաղաքացիները, որոնք օսմանյան օրենքի համաձայն, օտար ծառայության մեջ լինելով, առանձին արտոնություններ էին վայելում, նրանք, ովքեր թուրքերեն չգիտեին, ում 30 տարին լրացած չէր, ովքեր ընտրության ժամանակ ծառայում էին որևէ մեկի մոտ, ովքեր սնանկացած էին և կամ կորցրել էին իրենց վարկանիշը, ովքեր իրենց նկարագրով արատավորված էին հասարակության մեջ, գտնվում

---

[4] В. Г. Т у н я н. Младотурки и Армянский вопрос. Часть первая, 1908–1912 гг., Ереван, 2004, с. 63-64.

[5] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890 էն 1940), Փարիզ, 1947, էջ 178:*

[6] *Տ ի գ ր ա ն Զ ա վ ե ն. Թյուրք Սահմանադրությունը և երիտասարդ թյուրք կուսակցությունները, Թիֆլիս, 1908, էջ 25:*

[7] В. И. Ш п и л ь к о в а. Младотурецкая революция 1908–1909 гг. М., 1977, с. 194.

էին դատական արգելքի տակ, զրկված էին իրենց քաղաքացիական իրավունքներից և կամ էլ օսմանյան հպատակությունից, ինչպես նաև կանայք, բանվորներն ու գյուղացիները:

Պատգամավորն իր լիազորությունները կորցնում էր մահվան, դատական արգելման, երկրից երկար ժամանակով բացակայելու և պետական պաշտոնի նշանակվելու դեպքում[8]:

Սուլթանական կառավարության կողմնակիցները փորձեցին խախտել պատգամավորների ընտրության կարգը և 1877 թ. նման այն փոխարինել պատգամավորներին վարչական խորհրդի անդամների կողմից կատարվող նշանակմամբ, որը կապահովեր խորհրդարանի արագ հրավիրումը և կսահմանափակեր երիտթուրքերի համախոհների ընտրության թվաքանակը[9]: Սակայն դա նրանց չհաջողվեց: Երիտթուրքերը հաճախակի էին հանդիմանում հայերին, ասելով, որ «Սահմանադրությունը դուք բերիք, ձեզի կը պարտինք…»[10]:

Ոգևորված այդ մտայնությամբ, դեռևս սահմանադրության հռչակման օրերին՝ 1908 թ. օգոստոսին, դաշնակցականներ Արամը, Սարգիսը, Կոմսը և Իշխանը հարց էին բարձրացրել Վան ժամանած Իթթիհատի ներկայացուցիչ Էմեր Նաջիի առջև Արևելյան նահանգների ներկայացուցիչների համագումարի հրավիրման, պետական վարչական գործերի մեջ Իթթիհատի հետ վերահսկողության հաստատման, հողային վեճերի կարգավորման նպատակով հատուկ՝ խառը հանձնաժողովի ստեղծման և խորհրդարանական ընտրությունների ժամանակ Վանից, Էրզրումից և Տարոնից հայ թեկնածուների առաջադրման մասին[11]: Հայերն իրավունք ստացան ընտրելու 10 երեսփոխան, որոնց թիվը հաջորդ ընտրությունների ժամանակ, որպես իթթիհատական կոմիտեի բացառիկ շնորհ հայերին,պիտի հասներ 13–14-ի[12]:

Եթե ընդունենք, որ հայերի թվաքանակը Օսմանյան Թուրքիայում 1908–1914 թթ. կազմում էր մոտավորապես 2–2,5 մլն, ապա իթթիհատականների գործելակերպն ամենևին էլ զիջում չէր և իրականում ներկայացնում էր նրանց անարդարությունը արևմտահայության հանդեպ: «Ամեն տարակույսե վեր է,– գրում էր Հ. Երամյանը,– որ ժեոն թուրքերու կամ իթթահատի ազատական ձգտումներու շպարին ներքև քողարկված կը մնար նեղ ազգայնական ոգի մը, որ միանգամայն զերծ չէր իսլամական մոլեռանդութենե և որուն պիտի միանային նաև համիսլամական և համաթուրանական ծրագիրները»[13]: Եթե «այդ մարմինը ամբողջապես պիտի կազմվի սուլթանների բացարձակ կամքի որոշմամբ,– ավելացնում է Ս. Սապահ-Գյուլյանը,– արդ, ո՞ր տրամադրությամբ, ո՞ր ազգերի համանման օրենքով չի կարելի եզրակացնել, որ ընտրված ծերակուտականները չեն լինի սուլ-

---

[8] *Տիգրան Զավեն. նշվ. աշխ., էջ 25-26:*

[9] Архив внешней политики Российской империи (*այսուհետև՝* — АВПРИ), ф. Канцелярия, МИД, 1908 г., д. 35, т. II, л. 311, *նաև՝* R. Deverеux. The First Ottoman Constitutional Period. Baltimore, 1963, p. 124.

[10] *Ե. Օտյան. նշվ. աշխ., էջ 456:*

[11] *Արամը, մահվան հիսնամյակին առթիվ, Երևան, 1991, էջ 63-64:*

[12] *Հ. Երամյան. Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 105-106:*

[13] *Նույն տեղում, էջ 106:*

թանների բացարձակ հլու, հնազանդ, հաճոյակատար ստրուկները, հետևաբար գահակալի իղձերի թարգմանը ու արտահայտիչը և ո՛չ թե ժողովրդի, որի անունով իրենք պիտի խոսեն, որոշում կայացնեն: Իրենց գոյությունը բռնապետին պարտական լինելով՝ նրանք բռնապետի էլ գործիքը պիտի լինեին դեպի այն ժողովուրդը, որից իրենք ո՛չ մի կախումն, որի հետ իրենք ո՛չ մի առնչություն ունեին: Օսմանյան այդ եզակի Ծերակույտի մեջ հայկական ծագում ունեցող օսմանցիները – չէ՞որ ամենքի ազգայնությունը օսմանյան պիտի լինի – ամենայն հավանականությամբ կունենան Տատյաններ, Նուրյաններ, Նորատունկյաններ – նստած Զնդէտ, Սայիդ, Մահմուտ Ջալալեդդին փաշաների կողքին. Աշրգյաններ, Օրմանյաններ, Մամբրեներ – բազմած Ուլեմաների, Մուֆտիների և Շեյխ-ուլ-Իսլամների կշտին»[14]:

Այդ էր պատճառը, որ սահմանադրության օրերին Անդրանիկ Օզանյանը գաղտնի մեկնեց Կ. Պոլիս և հանդիպեց Ռուբեն Զարդարյանին՝ փորձելով զգուշացնել նրան և նրա ընկերներին՝ օսմանյան երեսփոխանական ժողովի մեջ չմտնելու համար: Սակայն, ցավոք, ընդդիմության հանդիպեց[15]:

Համանման կարծիք էր հայտնում նաև Ռուբենը, որը 1908 թ. սահմանադրությունից հետո տեղափոխվում է Վան, իսկ այնտեղից՝ Կովկաս: Հավատ չընծայելով սահմանադրության նկատմամբ, նա առաջարկում էր խորհրդարանական գործունեությամբ շատ չոգևորվել և, օգտվելով սահմանադրության ընձեռած հնարավորությունից, արագորեն լծվել արևմտահայության զինման գործին: Դեռ ավելին, նա պահանջում էր երիտթուրքերից հետ ստանալ 1908 թ. Վանի զինապահեստներից մատնությամբ բռնագրավված զենքերը. «Եթե Սահմանադրական կառավարությունը վստահի և վերադարձնի, լավ, եթե չվերադարձնի, ուրեմն անվստահելի է, մենք ալ տարբերություն չպիտի դնենք հին ու նոր ռեժիմների միջև»[16]: Անկախ ամեն ինչից, Անդրանիկի հավաստմամբ, «…սկսան կռիվ մը թրքական խորհրդարանի աթոռները խլելու համար»[17]: Մ. Ավետյանի բնորոշմամբ՝ «երեսփոխանական աթոռներ գրավելու համար Պոլիս վազած էին ոչ միայն Վարդգեսներ և Տաղավարյաններ, այլև Զեյթունի հերոս մեծն Մուրատներ և Պանք Օթոմանի «պոմպաճի» Կարո Բաստրմաճյաններ»[18]:

1908 թ. մեպուսական ընտրությունների ժամանակ Վանում իրար դեմ պայքարում էին ՀՅԴ, արմենական խմբակը՝ «չափավոր ազատականք» անվան տակ և «Թերգիրաշյան» խմբակը՝ կազմված վաճառական էֆենդիներից ու հին վարչակարգի թուրք պաշտոնյաներից: Մեպուսական և ազգային ընտրությունների առիթով սեպտեմբերից սկսած նախընտրական միտինգներ, հրապարակային ժողովներ, դասախոսություններ, ճառախոսություններ և տենդագին վիճաբա-

---

[14] *Ս. Ս ա պ ա հ - Գ յ ո ւ լ յ ա ն. Երիտասարդ Թյուրքիա, Պարիզ, 1908, էջ 28:*

[15] *Մ. Ա վ ե տ յ ա ն. Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870-1920) հուշամատյան և զոր. Անդրանիկ, վերլուծական հայեցողությամբ և վավերական տվյալներով, Փարիզ 1954, էջ 136:*

[16] *Ռ ո ւ բ ե ն. Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Ե, Լոս Անջելես, 1951, էջ 235, նաև՝ Ա. Ն ե ր ս ի ս յ ա ն. Ռուբեն, Երևան, 2007, էջ 127:*

[17] *Ա. Ժ ա մ կ ո չ յ ա ն. Զորավար Անդրանիկ կպատասխանե իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 21:*

[18] *Մ. Ա վ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 136:*

նություններ տեղի ունեցան Վանի գերեզմանատներում, Կենտրոնական վարժարանում, բողոքականների ժողովարանում և նույնիսկ բաց դաշտի մեջ՝ պարզելու համար իրենց հիմնական պահանջները՝ հողային, հարկային, զինվորական և ընտանեկան հարցերի շուրջը և «ապագա երեսփոխանների «շնորհքը»… երկինքեն աստղերը վար բերելու խոստումները…»[19]: Դասախոսություններով հանդես եկան դաշնակցական գործիչներ Ղ. Մելոյանը, Մ. Թերլեմեզյանը, Արամը, Վ. Փափազյանը, Խլղաթյանը, Բժիշկը, Ա. Մաքսապետյանը, Սարգիսը, «խլու» Մարկոսը, Թևֆիկ էֆենդին և ուրիշներ[20]: Ընտրական պայքարի օրերին միևնույն բեմից փոխնիփոխ խոսում էին դաշնակցականները, սահմանադիր-ռամկավարները և հնչակյանները՝ ժողովրդի առաջ պարզելու համար իրենց պահանջներն ու ակնկալությունները: «Ամենքն էլ ժողովրդի բարեկամ են դարձել այսօր,– գրում է «Գործ» պարբերականը,– երբ վերջապես հարկավոր է շահագործել ժողովրդի բարեկամությունը բուն իսկ այդ ժողովրդի դեմ գործելու համար»[21]: Սակայն հերքողական, երբեմն նույնիսկ խիստ ճառերից հետո, կուսակցական ղեկավարները հաճախ եղբայրաբար իրար էին միանում[22]:

Դաշնակցությունն իր կողմից կազմել էր ընտրական հատուկ մի հանձնախումբ, որը քարոզչություն էր ծավալում և թռուցիկներով պարզում սահմանադրության շուրջ եղող սկզբունքային ու գործնական հարցերը: Դաշնակցության շրջիկները, ցրված գավառներում և գյուղերում, պայքար էին մղում իրենց գաղափարների հաղթանակի համար[23]:

Օսմանյան խորհրդարանի երեսփոխանական ընտրության ժամանակ դաշնակցության Վանի կենտրոնական կոմիտեն առաջարկեց Կոմսի՝ Վահան Փափազյանի թեկնածությունը՝ իբրև վանեցու, քանի որ օրենքով խորհրդարանի անդամ կարող էր ընտրվել միայն տեղացին: Բայց Կոմսը համաձայն չէր: «… Անախորժ անակնկալ մըն էր ինծի համար,– գրում է Կոմսը:– Երբեք միտքես անցած չէր նման պատասխանատվության տակ մտնել: Կը ըզգայի, որ անախորժ պարտականություն մըն էր՝ խառնվածքիս բացարձակ անհամապատասխան, մանավանդ, որ լեզուն ալ չէի գիտեր»[24]: Միաժամանակ, նա գտնում էր, որ այդ պաշտոնի համար իր պատկերացումներով ամենահարմարը՝ Արամ Մանուկյանն էր՝ «իր հանդգնությամբը, խորհրդարանական միջավայրի շուտով հարմարող՝ իր մատչելի և անկաշկանդ բնավորությամբ, մանավանդ որ քիչ շատ ալ թյուրք-թաթարական լեզվով կրնար լավ-գեշ արտահայտվիլ»[25]: Սակայն վերջինս էլ կտրուկ հրաժարվում է՝ տեղացի չլինելու պատճառով: Հետագայում Կոմսը, ցավով անդրադառնալով իր երեսփոխան ընտրվելու հարցին, կշտամբանքով վերհիշում էր Արամի մերժումը. «Այդ պարտականության (երեսփոխանի) մարդը Արամը կըրնար լինել: Ինչո՞ւ չընդունեց: Չէ՞ որ իր խառնվածքով,

---

[19] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. Իմ հուշերը, հատոր երկրորդ, Պեյրութ, 1952, էջ 41:*

[20] *«Գործ» (Թիֆլիս), 25. X. 1908, նաև՝ Վ. Փ ա փ ա զ յ ա ն. Իմ հուշերը, էջ 42:*

[21] *«Գործ» 20. IX. 1908:*

[22] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 122-123:*

[23] *«Գործ», 14.IX.1908:*

[24] *Արամը, մահվան հիսնամյակին առթիվ, էջ 64:*

[25] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 40-41:*

աննկուն, համարձակ ու անկաշկանդ՝ համառ պայքարող մըն էր, որ իր թերի լեզվով իսկ կրնար խորհրդարանի բեմեն որոտալ բոցավառ խոսքեր՝ ուղղված պետության վարիչներուն, ներկայացուցչական աթոռներու վրա բազմած թուրք «երևելիներուն», որոնցմե շատերու ձեռքերը հավանաբար մաքուր չէին հայերու արյունեն ու արցունքեն»[26]:

Հնչակյանները, որոնց մի մասը «...երեսփոխանական ընտրություններուն առիթով իրենց համար պատիվ համարեցին «պլոք» կազմել դաշնակցականներուն հետ», պաշտպանում էին Վ. Փափազյանի թեկնածությունը[27]: Միանալով դաշնակցականներին՝ նրանք վիժեցրին «պուրժուաներու», այսինքն՝ արմենականների թեկնածուներ Ավետիս Թերզիբաշյանի և բժիշկ Գալուստ Ասլանյանի ընտրությունը: Հնչակ-դաշնակցական խմբակցությունն առարկում էր, որովհետև Ավ. Թերզիբաշյանը չնայած թուրքերենի և ֆրանսերենի մեջ հմուտ էր ու իր հարստությամբ ազդեցիկ անձնավորություն էր Վանում, սակայն զուրկ էր հեղափոխական գաղափարներից և չէր կարողանա ժողովրդին հուզող խնդիրները հավատարմորեն ներկայացնել օսմանյան խորհրդարանում: Իսկ Գ. Ասլանյանը 20 տարուց ի վեր ապրելով Փարիզում և Սալոնիկում, անտեղյակ էր հայրենիքի ցավերին[28]: Արդյունքում, արմենականների ու թերզիբաշյանների բլոկը սկսեց մերձենալ քուրդ և թուրք հետադեմ տարրերին:

Միաժամանակ, ժողովուրդը հավատացած էր, որ դաշնակցականները, որոնց օգտին քվեարկելու էին նաև թուրք, քուրդ և ասորի գյուղացիները, իրենց համար հող ու իսկական արդարություն կպահանջեին[29]: Այդ մասին «Մշակ»-ը գրում է. «Դաշնակցությունը չունի արժանավոր ընտրելի, այս բոլոր վանեցիք գիտեն, բայց կը ջանա ույժով, գաղտնապես գյուղացոց քվեները հավաքել և վերջին ըռպեին իր ընտրելիի (խոսքը՝ հնչակյան Մարտիրոս Նալբանդյանի մասին է, որը Իթթիհատի կուսակցության Վանի մասնաճյուղի անդամ էր – Ավ. Հ.) վրա կեղրոնացնել: Այս բանը մեծ զզվանք առաջ կը բերե»[30]:

Նախընտրական քարոզարշավի վերջում Հ. Երամյանի որբանոցը կազմակերպեց պաշտոնական հանդես, որին մասնակցեցին Վանի կուսակալը, Վանի թուրքական զորքերի հրամանատարը, Վանի ռուսական հյուպատոս Ս. Օլֆերևը և բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

1908 թ. սեպտեմբերին (այլ տեղեկություններով՝ նոյեմբերի 15-ին) տեղի ունեցան օսմանյան խորհրդարանի (դեպուտատների պալատի) առաջին աստիճանի պատվիրակային ընտրություններ: Վասպուրականը բաժանված էր 47 ընտրական շրջանների, որոնցից՝ 10-ը՝ քաղաքում, իսկ 37-ը՝ գավառներում[31]: Նահանգը (Հեքիարիի մյութեսարիֆության հետ) ներկայացնում էր 83 000 ձայնատու, որից 29 000-ը հայեր էին:

---

[26] *Նույն տեղում, էջ 40:*
[27] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 180:*
[28] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 110:*
[29] *«Գործ», 7. X. 1908, նաև՝ «Մշակ», 14. XI. 1908:*
[30] *«Մշակ», 28. IX. 1908:*
[31] *«Գործ», 17. IX. 1908:*

Ընտրություններում հաջողություն ապահովելու համար երիտթուրքերը կայսրության տարբեր շրջաններ ուղարկեցին իրենց ներկայացուցիչներին, որոնց նպատակն էր տեղերում ստեղծել «Միություն և առաջադիմություն» կուսակցության մասնաճյուղեր ու ապահովել իրենց թեկնածուների հաղթանակը: Էրզրում, Վան, Մուշ, Բիթլիս, Մոսուլ, Դիարբեքիր, Դամասկոս և Բեյրութ մեկնեց Սալոնիկի կոմիտեի անդամ, գլխավոր շտաբի մայոր Վեհիբ փաշան[32]:

Երիտթուրքերն ու քրդերը մեծ ջանք գործադրեցին նաև ընտրական խարդախություններ կազմակերպելու ուղղությամբ, որպեսզի Վասպուրականի նման հայաշատ նահանգից հայ պատվիրակներ չընտրվեին օսմանյան պառլամենտի մեջ: Նրանք գյուղերը խմբավորում էին այնպես, որ թուրքերը, չնայած այս կամ այն շրջանում փոքրամասնություն լինելուն, ընտրության ժամանակ ստանում էին առավելություն: «Վանի մեջ ընտրական գործողությունները մինչև վերջին օրերը, ուր մեր ընտրելիի հաջողությունը կասկածի տակ էր, անօրինակ զեղծումներու թատերաբեմ դարձած էին».[33] Ինչպես Վ. Փափազյանն է նշում, «Երեսփոխանական հապճեպ ընտրություններու ատեն Իթթիհատի հետ մեր բանակցություններու արդյունքը շատ գոհացուցիչ չէր: Անոնք ներքնապես հրահանգած էին սահմանափակել քրիստոնյա ընտրելիներու թիվը: Վասպուրականը, հայ ազգաբնակության թվի համեմատությամբ, կրնար երեք երեսփոխան տալ, մինչդեռ հազիվ մեկը ունեցավ: Նույն և Տարոնը: Բաղեշը՝ ոչ մեկ»[34]:

Վանում կատարված ընտրական կոպիտ խախտումների պատճառով թույլատրվեց անցկացնել կրկնակի ընտրություններ[35]: Վասպուրականից նախապես իրավունք էր տրված ընտրելու մեկ հայ և մեկ թուրք երեսփոխան: Սակայն ընտրվեցին երեքը[36]: Թուրքերի կողմից առաջադրված 8 պատվիրակներից՝ որպես Վանի թուրք պատգամավորներ ընտրվեցին երկուսը՝ առաջադիմական ճանաչված Մերվետ էֆենդին[37] և տեղացի կալվածատեր Թիմուրզադե Թևֆիկ էֆենդին, որը տարիքով մի կիսագրագետ անձնավորություն էր՝ մեղմ բնավորությամբ[38]:

«Ջախջախիչ» մեծամասնությամբ Վասպուրականի կողմից Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավոր ընտրվեց Վահան Փափազյանը, որը խոշոր հաղթանակ տարավ հատկապես գավառներում: Այդ մասին նա հետագայում հիշում է. «Մերինները հրճվանքի մեջ էին, իսկ ես տխուր ու մտատանջ էի՝ իմ առջև բացվող այս նոր, անծանոթ և անախորժ կյանքին հանդեպ»[39]: Այս հաղթա-

---

[32] Центральный государственный военно-исторический архив РФ, ф. 2000, оп. 1, г. 6948, л. 32, 40, *նաև՝* д. 6862, л. 48.

[33] *Ե. Օ տ յ ա ն (Ե ր օ տ). Ընկեր Փանջունի Վասպուրականի մեջ, Ընկերվարական նամականի ընկեր Բ. Փանջունիէ, Վենետիկ – Ս. Ղազար, 1959, էջ 89:*

[34] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 90:*

[35] АВПРИ, ф. 121, ф. Посольство в Константинополе, д. 1595, л. 117.

[36] В.И. Ш п и л ь к о в а. *Նշվ. աշխ., էջ 199:*

[37] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 110:*

[38] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 40:*

[39] *Նույն տեղում, էջ 42:*

նակը, Ա. Դարբինյանի իրավացի համոզմամբ, արդյունք էր «դաշնակցականներու և իթթիհատականներու միջև գոյացած համագործակցության»[40]:

Վ. Փափազյանը՝ բնիկ վանեցի և երախտավոր ուսուցիչ Տեր Մեսրոպ քահանա Փափազյանի որդին, մեծ համակրանք էր վայելում ժողովրդի լայն խավերի մեջ, ուստի և ներկայացավ որպես անմրցակից թեկնածու ու ժողովրդանվեր հեղափոխական: Վ. Փափազյանը, որն անկարող էր թուրքերենով արտահայտվել (նրա թարգմանիչն էր Դավիթ Փափազյանը), մասնակցում էր միայն խորհրդարանի բարենորոգումների հանձնաժողովի աշխատանքներին և ձգտում էր հարաբերություններ հաստատել միայն այլ ազգությունների հեղափոխական երեսփոխանների հետ[41]: Կարծում ենք, որ նրա նկատմամբ չէր կիրառվել սահմանադրությամբ նախատեսված թուրքերեն լեզվի իմացության պարտադիր պայմանը:

Քվեարկության օրը մեծաշուք տոնակատարության կերպարանք ստացավ. Վանի կուսակալը հանդիսավոր ճաշկերույթ կազմակերպեց ընտրված երեսփոխանների պատվին:

Վանից մեկնելու նախօրյակին Վ. Փափազյանը մեծ խոստումներ էր շռայլում բոլորին: «Մենք, ձախակողմյան երեսփոխաններս,– ասում էր նա,– պատնեշի վրա պիտի կանգնենք և կուրծք պիտի տանք դեպի ժողովուրդը, դեպի հասարակական իրավունքները, դեպի արդարություն ուղղված հարվածներին»[42]: Բայց նա նշանավոր եղավ միայն իր լռությամբ, այնպես որ շատերի կողմից արժանացավ «համր երեսփոխան» տիտղոսին[43]:

Ազգային, կուսակցական և կառավարությանը առաջադրվելիք մի շարք խնդիրներ մշակելուց հետո, Վ. Փափազյանը Ալաշկերտի, Թիֆլիսի, Բաթումի վրայով մեկնեց Կ.Պոլիս: Ահա թե ինչպես է իր հրաժեշտի պահը ներկայացնում Վ. Փափազյանը. «Վան քաղաքը հայ և թյուրք – ոտքի վրա է: Զինվորական և քաղաքացիական իշխանությունը բերդին ետև, Ավանց նավահանգիստի ճամբուն վրա, հրաժեշտի հանդես էր կազմակերպած: Զինվորական նվագախումբ, հայերեն-թյուրքերեն ճառեր, օդին մեջ նետված հրահանգներ, բարեմաղթություններ և, մանավանդ, երդումներ, թե ամբողջ ժողովուրդը պատրաստ է «մինչև իր արյան վերջին կաթիլը զոհելու սահմանադրության պաշտպանության համար»... սնամեջ ու հազար անգամ կրկնված անկատար խոստումներ»[44]:

Մեպուսանի մեջ աթոռներ բաշխվեցին նաև Օսմանյան կայսրության այլ վայրերի քրիստոնյաներին: Օսմանյան խորհրդարանում հայ երեսփոխանները ներկայացնում էին հետևյալ պատկերը. Կ.Պոլսից՝ Գրիգոր Զոհրապը և Պետրոս Հալաջյանը, Իզմիրից՝ Ստեփան Սպարթալյանը (Սպարթալ) և Հակոբ Պապիկյանը, Գոզանից՝ Համբարձում Պոյաջյանը (Մուրադ), Էրզրումից՝ Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո) և Վարդգեսը, Մուշից՝ Գեղամ Տեր-Կարապետ-

---

[40] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 180:*
[41] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 115:*
[42] *«Մշակ», 17. VI. 1912:*
[43] *Նույն տեղում:*
[44] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 42-43:*

յանը, Սեբաստիայից՝ դոկտոր Նազարեթ Տաղավարյանը, Վանից՝ Վահան Փափազյանը:

Հետագայում՝ 1912 թ., խորհրդարանի հայ պատգամավորների թիվը հասավ 18-ի. այդ թվում՝ Կ.Պոլսից՝ Պետրոս Հալաջյանը և Գրիգոր Զոհրապը (Չեզոք), Կարինից՝ Գարեգին Փաստրմաճյանը, Հովսեփ Մատաթյանը և Վազգեն Սերանկուլյանը, Իզմիրից՝ Ստեփան Սպարթալյանը, Օնիկ Իհսանը և Վահան Պարտիզպանյանը, Սեբաստիայից՝ դոկտոր Նազարեթ Տաղավարյանը, Տիգրան Պարսամյանը և դոկտոր Փաշայանը, Մարզվանից՝ Կարապետ Թամայանը, Ռոտոսթոյից՝ Հակոբ Պապիկյանը, Էդիրնեից՝ Հակոբ Պոյաջյանը, Գոզանից՝ Մատթեոս Նալբանդյանը և Համբարձում Պոյաջյանը, Մուշից՝ Գեղամ Տեր-Կարապետյանը, Վանից՝ Վահան Փափազյանը[45]:

Սկզբնական շրջանում պառլամենտի բացումը նախատեսվում էր 1908 թ. նոյեմբերին: Սակայն նախընտրական գործընթացը, որը շարունակվեց մոտ երեք ամիս, ձգձգվեց Մակեդոնիայում, Ալբանիայում և արաբական շրջաններում սկիզբ առած հուզումների պատճառով: Ի վերջո, 1908 թ. դեկտեմբերի 4-ին (17-ին) 101 թնդանոթների որոտով և մեծ հանդիսավորությամբ Ստամբուլում՝ Արդարադատության նախարարության շենքում, իր աշխատանքները սկսեց թուրքական երկրորդ խորհրդարանը[46], որի հանդիսավոր նիստը բացեց Աբդուլ Համիդ II-ի առաջին քարտուղար Ալի Ջևադ բեյը: Վերջինս ներկայացրեց սուլթանի զեկույցը, որտեղ փորձում էր իրեն հեռու պահել 1878 թ. խորհրդարանի ցրման պատասխանատվությունից: Այնուհետև սուլթանն անձամբ շնորհավորեց երեսփոխաններին՝ խորհրդարանի աշխատանքների սկսման կապակցությամբ[47]:

Խորհրդարանի նախագահ ընտրվեց տարագրությունից վերադարձած երիտթուքերի գաղափարական ու տնտեսական ղեկավար, «ազատական մտքի վեթերաններեն»՝ Ահմեդ Ռիզա բեյը[48]: Խորհրդարանի բացումը մեծ արձագանք գտավ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ նահանգներում: Շատ քաղաքներում տեղի ունեցան հանրահավաքներ և ռազմական շքերթներ: Այդ օրը Վանում փակվեցին դպրոցները, երեկոյան կազմակերպվեցին լուսավառություններ և մի մեծ հանրահավաք հրավիրվեց բողոքական ժողովասրահի մեջ՝ հայերի և թուրքերի մասնակցությամբ: Ելույթ ունեցողները՝ Ֆերիկ Մահմուդ փաշան, Բժիշկը, Միհրան Թերլեմեզյանը, Ղևոնդ Սրվանձտյանը, Արշակ Վռամյանը և ուրիշներ «ազդու և հուզված շեշտերով» ցույց տվեցին «ազատության՝ մեր երազներից երազի

---

[45] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 109:*

[46] *Թուրքական առաջին խորհրդարանի բացումը տեղի էր ունեցել դեռևս 1877 թ. սկզբներին՝ 237 պատգամավորի մասնակցությամբ, որոնցից 13-ը՝ հայեր էին: Այն ժամանակ հայ պատգամավորական խումբն ուներ հետևյալ պատկերը՝ Վիչեն էֆ. Հոլաս (Ղալաթիա և Թոփանե), Ստեփան փաշա Ասլանյան (Սկյուտար), Սերվիչե էֆ., Հովհաննես էֆ. Ալլահվերդի, Սեպուհ բեյ Մաքսուդ, Սիմոն բեյ Մաքսուդ, Ալեքսան էֆ. Սաքայան, Հակոբ էֆ. Գազազյան, Ռուբեն էֆ., Մանուկ էֆ. Խարաճյան (Կարին), Համազասպ էֆ. Պալլարյան (Կարին), Հակոբ էֆ. Շահինյան (Սեբաստիա), Հակոբ էֆ. Ֆրենկյան (Ադանա)[46]: Խորհրդարանը գոյատևեց մինչև 1878 թ. փետրվարի 2-ը, որից հետո այն ցրվեց. տե՛ս Ե. Թ ո փ չ յ ա ն. Երիտասարդ Թյուրքիան և հայերը, մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 205:*

[47] В. И. Ш п и л ь к о в а. *Նշվ. աշխ., էջ 201:*

[48] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 111:*

իրականանալը…»[49]*: Հայերը, այցելելով թուրքական ակումբ, շնորհավորեցին երկրորդ խորհրդարանի բացումը:*

Չնայած երկրում տիրապետում էր օսմանիզմի քաղաքականությունը, սակայն այն որոշակի ազդեցություն չունեցավ խորհրդարանական երկրորդ ընտրությունների ժամանակ: Ինչպես Անդրե Մանդելշտամն է նշում, «պետք է ընդունիլ սակայն թե այս նոր տրամադրությունները (խոսքը օսմանիզմի=օսմանցիականության սկզբունքի մասին է.– Ավ. Հ.*) չափազանց զորավոր անդրադարձում մը չունեցան առաջին օսմանյան խորհրդարանին մեջ, ոչ - թուրք տարրին ունեցած ներկայացուցչության վրա»*[50]*:*

Ընտրությունների արդյունքում ձևավորվեց խորհրդարան, որը բաղկացած էր՝ Սենատից և երեսփոխանական պալատից: Պահպանված բազմաբնույթ տեղեկությունները հնարավորություն չեն տալիս ներկայացնելու խորհրդարանի պատգամավորների ճշգրիտ թվաքանակը՝ ազգային և դասակարգային կազմի առումով, որի արդյունքում պատմագիտական գրականության մեջ շրջանառվում են հակասական տվյալներ:

Սենատը բաղկացած էր 53 հոգուց[51]*: Սենատի անդամների 2/3-ը ընտրված էր, իսկ 1/3-ը՝ սուլթանի կողմից նշանակված: Ազգային պատկանելության առումով Սենատում տեղերը բաշխված էին հետևյալ կերպ՝ 41 թուրք, 4 հույն, 3 հայ, 2 հրեա, 1 բուլղարացի և 1 ուլահ (վալախ)*[52]*: Օսմանյան երկրորդ խորհրդարանի առաջին ընտրության արդյունքում թուրքերը մեծամասնություն կազմեցին: Պառլամենտի 266 պատգամավորներից 220-ը մահմեդականներ էին, 125-ը՝ թուրքեր, 70-ը (ըստ Ա-Դոյի՝ 60-ը)*[53]*՝ արաբներ, 25-ը՝ ալբանացիներ: Մնացած 46 պատգամավորները՝ քրիստոնյաներ և հրեաներ էին, որից 23-ը՝ հույներ, 10-ը (ըստ Ա-Դոյի՝ 12-ը)*[54] *հայեր, 4-ը՝ բուլղարներ, 4-ը՝ հրեաներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ վալախ*[55]*:*

Ըստ Ա. Մանդելշտամի՝ 275 երեսփոխաններից 60-ը՝ արաբներ էին, 25-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ, 12-ը՝ հայեր, 5-ը՝ հրեաներ, 4-ը՝ բուլղարացիներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ վալախ: Խորհրդարանի 275 պատգամավորների գրեթե կեսը՝ 133-ը, կազմված էր ոչ թուրքերից[56]*: Մայրաքաղաքի մեջ ընտրվեց 5 թուրք, 2 հույն, 2 հայ և 1 հրեա*[57]*: Ըստ Ա. Սարրուի՝ երեսփոխաններից 120-ը՝ թուրքեր էին, 70-ը՝ արաբներ, 23-ը՝ հույներ, 20-ը՝ ալբանացիներ, 10-ը՝ հայեր, 4-ը՝ հրեաներ, 4-ը՝ բուլղարացիներ, 3-ը՝ սերբեր, 1-ը՝ վալախ*[58]*: Ըստ Ի. Զի-*

---

[49] *«Գործ», 19. XII. 1908:*

[50] *Ա. Մ ա ն տ ե լ ս թ ա մ. Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, առաջին մաս, Կ.Պոլիս, 1919, էջ 39:*

[51] A. G a u v a i n. L'Europe au jour le jour, vol. I–II. Paris, 1917, p. 229.

[52] A. S a r r o u. La jeune Tarquie et la revolution. Paris, 1912, p. 43.

[53] *Ա - Դ ո. Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Երևան, 1917, էջ 36:*

[54] *10-րդ թեկնածուն իթթիհատական կուսակցության ներկայացուցիչ Հակոբ Պապիկյանն էր, որը սպանվեց Ադանայի կոտորածներից հետո:*

[55] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 90-91:*

[56] *Ա - Դ ո. նշվ. աշխ., էջ 36:*

[57] *Ա. Մ ա ն տ ե լ ս թ ա մ. նշվ. աշխ., էջ 39:*

[58] A. S a r r o u. La jeune Tarquie et la revolution, p. 46.

նովնի՝ երեսփոխաններից 46-ը՝ արաբներ էին, 26-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ, 10-ը՝ հայեր, 4-ը՝ բուլղարացիներ, 3-ը՝ սերբեր, 3-ը՝ հրեաներ[59]: Ըստ Վ. Միլլերի՝ երեսփոխաններից 18-ը՝ հույներ էին, 4-ը՝ բուլղարացիներ, 2-ը՝ սերբեր, 2-ը՝ հրեաներ, 1-ը՝ հայ[60]: Ըստ Ա. Կուրանի՝ երեսփոխաններից 142-ը՝ թուրքեր էին, 60-ը՝ արաբներ, 25-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ, 12-ը՝ հայեր, 5-ը՝ հրեաներ, 4-ը՝ բուլղարացիներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ վալախ[61]: Իսկ ըստ Ահմադ Ֆերոզի՝ 275 երեսփոխաններից 147-ը՝ թուրքեր, 60-ը՝ արաբներ, 27-ը՝ ալբանացիներ, 26-ը՝ հույներ, 14-ը՝ հայեր, 10-ը՝ սլավոններ և 4-ը՝ հրեաներ[62]:

Օսմանյան պառլամենտում ապահովվեց նաև շահագործող վերնաշերտերի (խոշոր կալվածատերերի և խոշոր ու միջին բուրժուազիայի) մեծամասնությունը: Պառլամենտի պատգամավորների 35 %-ը կրոնավորներ (սարբզլներ) էին, 30 %-ը՝կալվածատերեր, 20 %-ը՝պաշտոնյաներ, 10 %-ը՝ ազատ արհեստի ներկայացուցիչներ և 5 %-ը՝ անորոշ մասնագիտության անձինք[63]: Մոլանների մեծագույն մասը քրիստոնյատյաց էին և տգետ, իսկ մահմեդական կալվածատերերի 80%-ը՝ գրեթե անգրագետ: Պառլամենտում աննշան էր աշխատավոր բնակչության ներկայացուցիչների թիվը[64]:

Երիտթուրքերը միջոցներ չձեռնարկեցին արգելելու համար այլ կուսակցություններին պատկանող թուրք երեսփոխանների ընտրությունը:

Ըստ կուսակցական պատկանելության, պատգամավորներից 160-ը (այլ աղբյուրների համաձայն՝ 150-ը)[65] իթթիհատականներ էին, 20–25-ը (ըստ Ա. Մանդելշտամի՝ 10-ը)[66]՝ լիբերալներ-ապակենտրոնականներ («Ախրար» կամ «Ատամը մերքեզիեթ» կուսակցությունից) 4-ը՝ դաշնակցականներ, 2-ը՝ բուլղար «կլուբիստ»-ներ, 1-ը՝ սոցիալ-դեմոկրատ և 70-ը՝ անկուսակցականներ[67]: Այդ է եղել պատճառը, որ խորհրդային թուրքագիտական գրականության մեջ նշվի, որ «… հավաքված Մեջլիսի կազմում հայ տասներկու դեպուտատներից հինգը… կազմում էին թուրքական երկրորդ պառլամենտի սոցիալիստական խումբը»[68]:

Կրթական մակարդակով, իհարկե, բարձր էին քրիստոնյա երեսփոխանները: Հույներից շատերն ունեին բարձրագույն կրթություն: Նրանց մեջ կային բժիշկ, փաստաբան և պրոֆեսոր: Հայերից հինգն ունեին համալսարանական բարձրագույն կրթություն: Ինչպես Գր. Զոհրապն է ներկայացնում, «Օսմ. հայ երեսփո-

---

[59] АВПРИ, ф. Политархив, д. 3084, л. 154.

[60] W. M i l l e r. The Ottoman Empire and its Successors, 1801-1922. Cambridge, 1923, p. 479.

[61] A. K u r a n. Osmanleimparatorluğunda inkilâp hareketlerve milli mücadele. Istambul, 1956, p. 432.

[62] A h m a d F e r o z. The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908-1914. Oxford, 1969, p. 28.

[63] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 90-91:*

[64] *Ա. Հ ա մ բ ա ր յ ա ն. Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը, Երևան, 1979, էջ 14:*

[65] *Մ. Ա. Հ ա ս ր ա թ յ ա ն, Ս. Ֆ. Օ ր ե շ կ ո վ ա, Յ ո ւ. Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 209:*

[66] *Ա. Մ ա ն տ ե լ ս թ ա մ. նշվ. աշխ., էջ 39:*

[67] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 93:*

[68] *Հ. Գ. Ի ն ճ ի կ յ ա ն. Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, 1984, էջ 228:*

խանները անհատական արժանիքի տեսակետով ուրիշ Օսմ. երեսփոխաններեն ետ չեն մնար, եթե չեն գերազանցեր զանոնք...»[69]:

Երեսփոխանական ժողովի ճանաչված անդամներ դարձան Գր. Զոհրապը, Վարդգեսը, Պ. Հալաջյանը, Ն. Տաղավարյանը և ուրիշներ: Հայ երեսփոխաններ մասնակցել են հատկապես տնտեսական, դատական, կրթական և այլ օրենքների մշակմանը: Սակայն հայ երեսփոխանները, մեծամասամբ լինելով նախկին հեղափոխականներ, աքսորականներ, չեզոք կամ էլ Իթթիհատի կողմից թելադրված գործիչներ, չկարողացան ժողովրդի շահերի պաշտպանության միացյալ ճակատ կազմել և հայ ազգային դիմագիծը ներկայացնել խորհրդարանի մեջ, քանի որ «միշտ պաշտպան հանդիսացած են Սահմանադրական ոգիին, հավատալով այդ կերպով լավագոյն պաշտպանությունը կատարած ըլլալ ոչ միայն իրավակարգին, այլ կայսրության ընդհանուր շահերուն, ինչպես հայության շահերուն»[70]*: Բացի այդ, մոտ 300 հոգուց բաղկացած խորհրդարանում ի՞նչ կշիռ պիտի ունենար նրանց կարծիքը, երբ միայն 3–4 հոգի կհամարձակվեին խոսել մաքուր թուրքերենով: Վ. Փափազյանի հավաստմամբ՝ «Մեր և քրիստոնյա մյուս երեսփոխաններու դժբախտությունը պետական լեզվի անծանոթությունն է. այդ պատճառով լուռ ու մունջ ունկնդրի դերի մեջ էինք, առանց նույն իսկ հասկնալու մոլլաներու արաբախառն և «գիտուններու» խոսած տաղտկալի ճառերու բովանդակությունը: Հայերու մեջ փայլուն թրքագետ հռետորը Զոհրապն էր և խոսելու կարողութենե ոչ զուրկ Հալաճյանը. մյուսները իրենց լվացքը կրնային ջուրեն հանել կոպիտ կամ թերի թյուրքերենով: Ամենեն խեղճը ես էի և մասամբ Գարոն, ան խորհրդարանեն դուրս գոնե կրնար հասկցնել ինքզինքը: Մտածեցի և որոշեցի աշակերտի դերի մեջ մտնալ և թյուրքերեն դասեր առնել: Հայտնի Ստեփան Կուրտիկյանն էր իմ ուսուցիչը՝ վարպետ թյուրքերենի, արաբերենի և պարսկերենի»*[71]*: Կար նաև մեկ այլ դժվարություն. դա խորհրդարանական հետադեմ միջավայրն էր: «Եվ կը կարծե՞ք,– գրում է Գր. Զոհրապը,– միթե որ դյուրին է երեսփոխանի պաշտոնը Օսմ. Խորհրդարանին մեջ. կը կարծե՞ք որ հոն կրոնամոլական, հին գաղափարներով տարված հոսանքներ չի կան: Պետք է մոտեն ճանչնալ Օսմ. Խորհրդարանը՝ գիտակցաբար դատելու համար հայ երեսփոխանին դժվարին և ապերախտ վաստակն ու հոգնությունները»*[72]*: «Ամեն պարագայի տակ մեր ընտրյալները՝ այսօրվան ունեցած իրենց իրավունքներով պիտի կրնան թերևս շատ գեղեցիկ ցանկություններ հայտնելու, սակայն պայմանավ որ այդ ցանկությունները զուրկ լինին ո՛ր և է վճռական նշանակութենե: Որովհետև, ինչպես ձեզ ալ հայտնի է, մեր սահմանադրության զորությամբ կա ուրիշ հաստատություն մը, ուր նստած են մեզմեն չընտրված և մեր հավաքական կամքը չը ներկայացնող քանի մը հոգի, որոնք իրավունք ունին մեր երեսփոխաններու ըսածին վրա խոշոր խաչ մը քաշելու, եթե իրենց հաճելի չը թվի: Իսկ անոնց (խոսքս ծերակուտականներու մասին է) հաճելի չեն այն բոլորը, ինչ որ ուժեղի*

---

[69] *Գ ր. Զ ո հ ր ա պ. Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, Կ. Պոլիս, 1910, էջ 19:*

[70] *Լ. Չ ո ր մ ի ս յ ա ն. Համապատկեր Արևմտահայոց մեկ դարու պատմության, հ. Գ (1908-1922), Պեյրութ, 1975, էջ 65:*

[71] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 91:*

[72] *Գ ր. Զ ո հ ր ա պ. նշվ. աշխ., էջ 20:*

շահերուն դեմ և հասարակության շահերուն ի նպաստ են… Եթե նույնիսկ պատահի, որ այս կամ այն խնդրի շուրջը համաձայնություն մը կայանա մեր ընտրած երեսփոխաններուն և վերեն նշանակված ծերակույտի անդամներուն միջև, այդ պարագային ալ տակավին կա ամենազոր ձեռք մը, որ իրավունք ունի խաչը քաշելու եղած որոշման վրա»[73]*:*

Խորհրդարանում իթթիհատական պատգամավորներից աչքի էին ընկնում Ահմեդ Ռիզա բեյը (Ստամբուլ), Միդհատ Շյուքրի բեյը (Սերա), Թալեաթ բեյը (Էդիրնե), Հաֆիզ Իբրահիմ էֆենդին (Իպեկ), Հաբիբ բեյը (Բոլու), Մեհմեդ Ջավիդ բեյը (Սալոնիկ) և Մանիյասիզադե Ռեֆիկ բեյը (Ստամբուլ)[74]*: Երիտթուրքերը խորհրդարանում կազմեցին իրենց խմբավորումը, որի օգնությամբ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը նպատակ ուներ իրականացնելու հսկողությունը խորհրդարանի գործունեության վրա և աստիճանաբար նվաճելու օրենսդիր իշխանությունը: Խորհրդարանական խմբավորման ղեկավար դարձավ կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Թալեաթ բեյը:*

Իթթիհատի երեփոխան ընտրված անդամները, մասնավոր և հատուկ երդումով պարտավոր էին ենթարկվել կենտրոնական կոմիտեին և ճշտորեն կատարել նրա հրամանները. «Անոնք նոյն իսկ չէին կրնար թողուլ կուսակցությունը, առանց «որոշ վտանգումի» մը ենթարկվելու… գոմիթեն կրնար վստահ ըլլալ Միություն և Հառաջադիմություն կուսակցության խորհրդարանական հատուածին անդամներուն բացարձակ հավատարմությանը…»[75]*:*

Իթթիհատի մյուս գործիչները չմտան կառավարության կազմի մեջ: Նրանք հրամայողի ու հսկողի ֆունկցիաներ իրացրին դրսից, որի արդյունքում ձևավորվեց յուրատեսակ մի երկիշխանություն[76]*:*

«Միություն և առաջադիմություն» կուսակցությունը Սալոնիկից տեղափոխվեց Ստամբուլ:

Մինչև 1909 թ. մարտի 31-ը Իթթիհատը «ինքնավստահ հանդգնությամբ» իրեն զգում էր խորհրդարանի տերը, «ակներև կերպով կ' արհամարհեր անկախ մտածողները կամ սաղմնային վիճակի մեջ եղող հոսանքները. Իթթիհատի թմբկահարներու մատերը կը որոշեին ամեն հարց»[77]*: Իհարկե, կարգապահության և միատարրության մասին խոսք լինել չէր կարող. «քվեարկություններու ատեն դժվար էր զանազանել՝ ով որու քվե կուտար…»*[78]*: Հետագայում թուրք մտավորական երեսփոխանները, անհան-*

---

[73] *Հ. Ա ր ա մ յ ա ն ց. Ազատություն քաղաքական և տնտեսական, ատենախոսություն (արտասանված Կ.Պոլսո Կետիկ-Բաշա թաղը գումարված միթինկին մեջ, 10/23 սեպտեմբեր 1908), Կ.Պոլիս, 1908, էջ 15:*

[74] В. И. Ш п и л ь к о в а. *Նշվ. աշխ., էջ 200:*

[75] *Ա. Մ ա ն տ ե լ ս թ ա մ. նշվ. աշխ., էջ 40, նաև՝* А. Н. М а н д е л ь ш т а м. Младотурецкая держава. Историко-политический очерк. М., 1915, с. 12.

[76] В. И. Ш п и л ь к о в а. *Նշվ. աշխ., էջ 127, 262:*

[77] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 93:*

[78] *Նույն տեղում:*

դուրժելի համարելով Իթթիհատի միահեծանությունը, լքեցին Իթթիհատը և հանդես եկան իբրև ընդդիմադիր կուսակցություն՝ «Ախրար» անունով, որը հետագայում կոչվեց «Հուրրիեթ վե իթիլաֆ» («Ազատություն և համաձայնություն») և հարեց իշխան Սապահետտինի ապակենտրոնացման քաղաքականությանը:

Առաջին նստաշրջանի վերջում «կուսակցական շերտավորումների» արդյունքում օսմանյան պառլամենտը ձեռք բերեց ուժերի հետևյալ դասավորությունը. իթթիհատականների թիվը իջավ՝ հասնելով 85-90-ի, կրոնավորների նոր կուսակցությունը՝ «Ջեմիյեթը իլմիյե»-ն («Գիտունների ընկերություն»)՝ 25-30, «Ախրար»-ը՝ 55-60, անկուսակցականները՝ 90-100: Իսկ 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջման ձախողումից հետո խորհրդարանն ուներ հետևյալ պատկերը, Իթթիհատ՝ 125–130, դաշնակցականներ՝ 4, հնչակյաններ՝ 1, սոցիալ-դեմոկրատներ՝ 1, բուլղար «կլուբիստ»-ներ՝ 2[79]: Իսկ մնացած «անկուսակցական» պատգամավորները՝ թվով 80 մոլլաներ (ուլեմներ), որոնց մեծ մասը անդամակցում էր «Ջեմիյեթը իլմիյե»-ին, գործում էր Շարիաթի օրենքներով:

ПРЕДВЫБОРНАЯ БОРЬБА В ВАНЕ И ВТОРЫЕ ПАРЛАМЕНТСКИЕ ВЫБОРЫ 1908 Г. В ОСМАНСКОЙ ТУРЦИИ

АВЕТИС АРУТЮНЯН

Р е з ю м е

10 июля 1908 г. султан Абдул Гамид II снова внес в действие Мидтатскую конституцию 1876 г. Приказ султана о проведении выборов был опубликован 2 августа 1908 г. В Ван-Васпуракане началась предвыборная борьба. В сентябре 1908 г. произошли парламентские выборы, в связи с чем от Вана были выбраны 3 депутата, в том числе, член Армянской революционной партии “Дашнакцутюн” Ваан Папазян.

THE PRE-ELECTION STRUGGLE IN VAN AND THE SECOND PARLIAMENTARY ELECTIONS IN OTTOMAN TURKEY IN 1908

AVETIS HARUTYUNYAN

S u m m a r y

On July 10, 1908, sultan Abdul Hamid II again put into action the Mithat Constitution from 1876. Due to sultan’s order the elections were to take place on August 2, 1908. There was organized pre-election struggle in Van-Vaspurakan. In September, 1908 the elections took place and three candidates from Van were elected to the Parliament. The member of the Armenian Revolutionary Party “Dashnaktsutyun” Vahan Papazyan was one of them.

[79] *Նույն տեղում, էջ 94:*